

ԿԱՐԾՐԱՏԻՊ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Լ. Բ. ՍԱԹԵՎՈՍՅԱՆ

XX դարը լեզվաբանությունում գիտական տարբեր մոտեցումների դար էր: Եթե XX դարի սկզբին լեզվաբանների ուշադրությունը բևեռված էր լեզվի կառուցվածքի մեխանիզմի վրա, ապա այսօր՝ լեզվի իրական գործառության պայմանների ուսումնասիրության վրա:

XXI դարի սկզբին, որպես XX դարի գիտական և գեղարվեստական մտքի զարգացման օրինաչափ արդյունք, հռչակվեց մի նոր գիտական հարացույց՝ հոգելեզվաբանություն, ազգալեզվաբանություն, հոգեազգալեզվաբանություն, լեզվամշակութաբանություն, պատմամշակութային հոգեբանություն, նեյրոլեզվաբանություն և այլն, որը արտացոլում է հաղորդակցման ուսումնասիրության տարբեր հայեցակետերը:

Այսօր մեծ է լեզվաբանների ուշադրությունը բանավոր խոսքի, հաղորդակցվողների նպատակների և խնդիրների, հաղորդակցման ընթացքում պրագմատոցիալական ու դերային գործոնների նկատմամբ: Ակնհայտ է հետաքրքրությունը հաղորդակցման մտադրությունների, սպասումների և արձագանքների նկատմամբ («փնտենցիա», «իլլոցիա», «պերլոցիա» ըստ Տ. Գրայսի, Ջ. Օստինի և Ջ. Սյոբլի):

Այժմ էլ գիտնականների ուշադրության կենտրոնում են հաղորդակցման բաղկացուցիչները տարբեր իրավիճակներում և ոլորտներում: Ռուս գիտնական Օ. Լապտևայի կարծիքով մարդու խոսքային վարքագիծը պայմանավորված է երկու գործոնների համատեղմամբ՝ իրավիճակի և հաղորդակցման թեմայի²: Անօրյա կյանքում մարդկանց միջև տեղի ունեցող հաղորդակցման իրավիճակները կրկնվում են և, հետևաբար, կարծրանում: Այդպիսով՝ իրավիճակների կրկնությունը, նմանությունը, հաճախականությունը ի հայտ են բերել մի շարք կարծրատիպ արտահայտություններ, որոնք տարբեր լեզվաբաններ անվանում են տարբեր ձևով՝ նախադասություն-բանաձևեր (предложения-формулы - Օ. Եսպերսեն), կաղապարված արտահայտություններ (шаблонные фразы - Լ. Յակոբինսկի), հաղորդակցման կայուն բանաձևեր (устойчивые формулы общения - Ն. Ֆորմանովսկայա), դարձվածային (фразеологизированные - Պ. Լեկանտ), չմասնատվող (нечленимые - Վ. Մելիքյան) կամ ստացիոնար (стационарные - Ա. Պեչկովսկի, Ն. Չերեմիսինա, Լ. Մաթևոսյան) նախադասություններ³:

¹ Տե՛ս Թ. Պ. Գրայս, *Логика и речевое общение* // *Новое в зарубежной лингвистике: Лингвистическая прагматика*, вып. 16, М., 1985; *Дж. Л. Остин, Слово как действие* // *Новое в зарубежной лингвистике*, вып. 17, М., 1986; *J. R. Searle, Indirect speech acts* // *Syntax and Semantics*, v. 3, New-York - San-Francisco - London, 1975:

² Տե՛ս Օ. Ա. Լապտևա, *Русский разговорный синтаксис*. - Изд. 2-е, стереотипное, М., 2003, էջ 56:

³ Տե՛ս Օ. Եսպերսեն, *Философия грамматики* / Перевод с англ.; под ред. Б.А. Ильина, М., 1958, էջ 16-23; *П. А. Лекант, Синтаксис простого предложения в современном русском языке*, М., 1974, էջ 151; *Л. Б. Матевосян, Стационарное предложение:*

Հաճախականությունը սոցիալական գործոն է: Այս կամ այն կառուցվածքի, բառաձևի հաճախականությունը հասարակության մախրնտրության կամ մախասիրության փաստ է: Խոսքի կարծրատիպերը կամ «մերկայացման կարծրատիպերը» (стереотипы представления - Վ. Կրասնիխ)⁴ պատրաստի, նույն ձևով և իմաստով վերարտադրվող արտահայտության՝ խոսքի մեջ հաճախակի գործածման արդյունքն են:

Ռուս ականավոր գիտնական Ե. Պոլիվանովի կարծիքով, պատրաստի արտահայտությունների հաճախակի գործածումը խոսքի մեջ պայմանավորված է ի սկզբանե նրանց առկայությամբ մարդկանց գիտակցության բառապաշարում՝ տարբեր մտքեր արտահայտելու համար⁵: Այսինքն՝ այդ պատրաստի, անփոփոխ արտահայտությունների ցանկը մարդու լեզվագիտակցության շերտերից մեկն է, և խոսողը, հաղորդակցման իրավիճակից ելնելով, համապատասխան ընտրություն է կատարում ունեցած բառապաշարից: Այլ կերպ ասած, մարդու գիտակցության բաղադրիչներից մեկը կարծրատիպ խոսքային վարքագիծն է, որը պայմանավորված է կարծրատիպ իրավիճակով: Օրինակ՝ հանդիպելիս («հանդիպում» կարծրատիպ իրավիճակ) մարդիկ իրար ողջունում են (վարքագծի կարծրատիպ) հետևյալ արտահայտություններով՝ *Радн', Ողջունյն* և այլն (խոսքի կարծրատիպ):

Լեզվագիտակցությունը բազմաշերտ է⁶, և նրա կառուցվածքային հենասյուներից մեկը կազմում է **ռեֆլեքսիվ բնույթ** ունեցող կարծրատիպ շերտը: Այսօր կարծրատիպ արտահայտությունների հոգեբանական բացատրությունն ու հիմնավորումը գտնում ենք ստերեոլեզվաբանության մեջ, որի հիմնադիրն է ֆրանսիացի լեզվաբան Ժ. Դյուրենը:


Ժ. Դյուրենի տեսության հիմնական գաղափարն այն է, որ լեզվական երևույթների ընկալումը պայմանավորված է դրանց՝ մարդու մարմնին (սոմային) մոտ լինելով: Ժ. Դյուրենի կարծիքով մարդը ապրում է *չորս համակենտրոն ուղղումներում*, որոնք նա անվանում է *ճանաչման ուղղումներ* կամ *ճանաչողական ենթաշխարհներ*: Օգտագործելով Լեոնարդո դա Վինչիի հայտնի նկարը՝ Ժ. Դյուրենը իր հայեցակարգը պատկերում է հետևյալ ձևով՝

от стандартного к оригинальному, М.-Ер., 2005, էջ 23-24; **В. Ю. Меликян**, Актуальные вопросы синтаксиса русского языка: теория нечленимого предложения, Ростов-н/Д, 2002; **А. М. Пешковский**, Русский синтаксис в научном освещении, М., 1956, էջ 398-399; **Н. И. Формановская**, Функциональные и категориальные сущности устойчивых формул общения: Дисс. докт. филол. наук (на правах рукописи), М., 1979; **Н. В. Черемисина**, Стационарные предложения как коллоквиальный феномен // Теория и практика описания разговорной речи, Горький, 1982, էջ 152-158; **Л. П. Якубинский**, О диалогической речи // Русская речь. Труды фонетического института практического изучения языков: Сборник статей, / под ред. Л. В. Щербы, вып. 1, Петербург, 1923, էջ 193-194:

⁴ Տե՛ս **В. В. Красных**, Стереотипы: необходимая реальность или мнимая необходимость // Материалы IX Конгресса МАПРЯЛ. Братислава, 1999 г.: Доклады и сообщения российских ученых, М., 1999, էջ 270:

⁵ Տե՛ս **Е. Д. Поливанов**, Статьи по общему языкознанию. Избранные работы, М., 1968, էջ 59:

⁶ Տե՛ս **В. В. Красных**, Современная научная парадигма: лингвокогнитивный подход // Русский язык: исторические судьбы и современность: II Международный конгресс исследователей русского языка (Москва, филологический факультет МГУ, 18 - 21 марта 2004 г.): "Труды и материалы", М., 2004, էջ 120-121:



Օ իրավիճակային, ինֆրաշարախյուսական ոլորտ

I եզակիի, առկայականի ոլորտ

II ոչ առկայականի, մասնավորի, սովորականի ոլորտ

III ընդհանուրի, հավերժականի, ունիվերսալի ոլորտ⁷:

Նկ. ճանաչման չորս ոլորտները

Կարծրատիպ նախադասությունները (*Գրոհը տանի, Կեցցեն, Բարև, Ողջույն* և այլն) գտնվում են գրոյական ոլորտում կամ գրոյական ճանաչողական ենթաշխարհում, որը, ի տարբերություն մնացած ոլորտների, մարդու մարմնին ավելի մոտ է: Զրոյական ոլորտի ժամանակն ու տարածությունը այնքան խտացված են, որ մնան են ակնթարթային մի կետի: Այդ ոլորտում մարդկանց խոսքային (և ոչ խոսքային) վարքագիծը հիշեցնում է մարդու ճիշդ սուր իրի հանկարծակի դիպչելիս:

Ժ. Դյուրենի ստերեոլեզվաբանական տեսության հիմքում ընկած է ֆրանսիացի հոգեբան Ա. Վալլոնի⁸ մարդու խոսքային (կամ խոսույթային) և գործնական խելքի հակադրման գաղափարը: Որպես այդ գաղափարի ապացույց՝ Ա. Վալլոնը բերում է հետևյալ օրինակը. շիմպանզեն տեսնում է ծառի ծայրից կախված աղամաքուզը, գոռում-գոչում է, հետո բերում է արկղը, բարձրանում ու պոկում է այն: «Եթե աղամաքուզը և արկղը միաժամանակ չհայտնվեին շիմպանզեի տեսադաշտում, մա դժվար թե գտներ ճիշտ որոշումը, - նշում է Ա. Վալլոնը և ընդհանրացնում, - սակայն ոչ բոլոր կենդանիներն են գտնում դա (որոշումը)»⁸:

Թեև կարծրատիպ արտահայտությունները որպես պատրաստի նախադասություններ առկա են մարդու բառապաշարում, սակայն հիշողության խորքում ի հայտ են գալիս **կոնկրետ իրավիճակներում** (իրավիճակը կատարում է Ա. Վալլոնի օրինակի՝ արկղի ֆունկցիան), իսկ որոշ մարդկանց լեզվագիտակցության մեջ չեն էլ արթնանում վերջիններիս բացակայության պատճառով, քանի որ մարդու օպերատիվ հիշողության ծավալը փոքր է և խիստ անհատական:

Իրավիճակը այն պայմանական ռեֆլեքսն է, որը խթանում է լեզվագիտակցությունում կարծրատիպ արտահայտության ծնունդը: Օրինակ՝ իրար հանդիպելիս մարդիկ բնագոյաբար ասուն են. **Ուրախ եմ չեզքեզ տեսնելու համար: Ինչպե՞ս եք:**

Համաձայնության, համակարծիք լինելու դեպքում բոլորը օգտագործում են հետևյալ կարծրատիպ արտահայտությաննները՝ **Համաձայն եմ: Միանգամայն համաձայն եմ: Համաձայն եմ քեզ/չեզ հեղ: Իհարկե: Այո, իհարկե: Լավ: Շատ**

⁷ Տե՛ս **Ж. Дюрен**, О стереолингвистике, // Коммуникативно-смысловые параметры грамматики и текста, М., 2002, էջ 275-276:

⁸ **H. Wallon**, La vie mentale, Paris, 1982, p. 264-265.

լավ: Ճիշտ է: Ավելի լավ: Այդպես է: Հենց այդպես: Կարծես այդպես: Ճիշտ այդպես: Այդպես էլ կարծում էի: Հասկանում եմ: Պարզ է: Անշուշտ: Բնական է: Անպայման: Հասարակ: Հոգով ու սրտով: Անհասկած: Ծաղկավառանգ է: Ռոշ իմաստով, այո: Կարծում եմ, այո: Ենթադրում եմ, այո: Դժբախտաբար, այո: Գերազանց է: Հիանալի է: Կեցցե՛՜ Կեցցե՛՛ք: Բրավո՛՛ և այլն:

Համաձայն չլինելու, մերժելու, առարկելու դեպքում մարդիկ օգտագործում են՝ Ո՛չ: Համաչայն չեմ: Նույն կարծիքին չեմ: Ես այլ կարծիքի եմ: Ես դեմ եմ: Ես առարկում: Ես բողոքում եմ: Դուք սխալ եք ասում/վարվում: Միավում եք: Չեմ կարող: Դժբախտաբար չեմ կարող: Չէի ցանկանա: Դրանից բան չի սրացվի: Իզուր է: Դրանից ի՞նչ օգուտ: Ի՞նչ միջոց ունի այդպես վարվել: Չարժեք դրա մասին խոսել: Անիմաստ բան է: Ո՛չ մի դեպքում: Բոլորովին էլ այդպես չէ: Իհարկե, ո՛չ: Խոսք չի կարող լինել այդ մասին: Չի կարող պարահեղ: Անհավանական է: Անարդարություն է: Անհեթեթություն: Անհեթեթություն է: Հիմարություն: Հիմարություն է: Դատարկ բան: Դատարկ բան է: Ընդհակառակը: Ո՛չ մի այդպիսի բան: Բոլորովին էլ ո՛չ և այլն:

Կասկածանք, թերահավատություն, տատանում արտահայտելու դեպքում՝ Կասկածում եմ: Չեմ կարծում: Չեմ հավատում: Մի՞թե: Ճիշտ եք ասո՞ւմ: Համոզված եք: Այդ սրտ՛ւյզ է: Դժվար է հավատալ: Անհավատալի է: Կատակո՞ւմ եք: Չե՞ք կատակում: Դուք ավելի լավ գիտեք: Դուք գիտեք: Գաղափար չունեն: Ո՞վ գիտե: Ո՞վ կարող է ասել և այլն:

Չարմանքը սովորաբար արտահայտում ենք Օ: Վա՛յ բացականչությամբ կամ Ի՞նչ եք ասում: Ինչպե՞ս: Չի կարող պարահեղ: Այ բեզ բա՛ն: Ո՞ւմ մեքով կանցնեք: Չարմանում եմ: Ապշած եմ: Յնջված եմ: Ապշելու բան է: Ապշեցուցիչ է: Անհավատալի է և այլն:

Չայրույթը և վրդովմունքը արտահայտում ենք հետևյալ ձևով՝ Սարսափելի է: Ի՞նչ սարսափելի է: Հրեշավոր բան է: Անհեթեթ բան է: Ամո՛ք (Չեզ): Այդ էր պակաս: Արդեն չափն անցար: Լա՛վ է ... և այլն:

Այս թվարկումը կարելի է շարունակել...

Կարծրատիպ արտահայտությունը եվրիստիկ բնույթ ունեցող բացառիկ երևույթ է, որի բացատրությունը պետք է փնտրել առանց անցյալի օգնությանը դիմելու: Կարծրատիպ արտահայտությունները արտացոլում են լեզվում ներկա պահին գործող բոլոր միտումները:

Նշենք՝ լեզվի և մտածողության զարգացումը, որի ուսումնասիրությունը եղել է և մնում է լեզվաբանների ուշադրության կենտրոնում, փոխկապակցված է, և այդ հարցի հետազոտման մեջ բավականին մեծ տեղ է հատկացվում Մեայիր-Ուորֆի վարկածին⁹, որը թեպետ բուռն քննադատվեց, գիտական ասպարեզ բերեց հետազոտական նոր հարացույց՝ ճանաչողական պրոցեսների վերլուծություն բևեռային մշակույթներ ներկայացնող լեզուների հակադրման միջոցով¹⁰:

Որևէ լեզվի խոսակցական կարծրատիպ շերտի լիարժեք բացահայտումը և նրա՝ ուսումնասիրությունը, մեր կարծիքով, կխթանի յուրահատուկ բառարանի ստեղծմանը, որտեղ կարծրատիպ արտահայտությունները դասավորված կլինեն ոչ թե այբբենական հաջորդականությամբ, այլ աշխարհի լեզվապատկերը և բուն

⁹ Տե՛ս Յ. Սեփր, Избранные труды по языкознанию и культурологии, М., 1993; Б. Л. Уорф, Отношение норм поведения и мышления к языку, // Новое в лингвистике, вып. 1, М., 1960:

¹⁰ Տե՛ս Ա. Ս. Василевич, Описание фигуры человека в лексике семи языков: универсалии и различия, // Язык и сознание: парадоксальная рациональность, М., 1993, էջ 163:

հաղորդակցումը նկարագրող սոցիո- և հոգելեզվաբանական իմաստների առաջնության հերթականությամբ:

Այսպիսով՝ մտածողության կարծրատիպը հասարակության թելադրանքն է, այն դրսևորվում է մարդկանց վարքագծում, հետևաբար և խոսքում, որն էլ իր հերթին ճշգրիտ արտացոլում է տվյալ հասարակության մտածելակերպը:

Կարծրատիպ արտահայտությունների ուսումնասիրությունը, նրանց կառուցվածքային դասակարգումը, բաշխումը՝ ըստ հաղորդակցական իրավիճակների ու թեմաների, արդիական է լեզվի թե՛ տեսության և թե՛ դասավանդման տեսանկյուններից:

Л. Б. МАТЕВОСЯН — *Стереотипные высказывания: психолингвистическое обоснование.* — Стереотипный пласт, наряду с другими пластами: информационным, метафорическим, мифопоэтическим, — является составляющей структуры языкового сознания. Стереотипные высказывания имеются в виде готовых фраз в ассортименте словарного мышления человека, однако всплывают в памяти в определенной конкретной ситуации. Ситуация выполняет роль условного рефлекса, внешнего раздражителя. Стереотипные же высказывания являются произвольной реакцией на ситуацию.